



Գևորգ Էմին

Հայ ժողովրդին

Դու երգի ծո՛ւլ ես անաւի,
Ես՝ քո մի կաթի՛լը կյանքում.
Դու ծառի բո՛ւն ես կանաչ,
Ես՝ ճյուղ, որ քեզնո՛ւլ է ծաղկում.

Չլինէր լի՛ճը Սևանա –
Հագի՛ւլ թե գրնգար Զանգուն

Թե չլինէր հո՛ղը քո,
Ասա՛ ինձ, ո՞ւր չոչեին,
Ո՞ր կտուրին իջնեին
Աղավնիներ՝ը երգիս.

Թե չլինէր հո՛ղը քո,
Որտե՞ղ հողմից փրկվեին,
Ո՞րտեղ խարիսխ ձգեին
Առագաստներ՝ը երգիս.

Թե Արև իսկ լինեի –
Ինչի՛ս էր փառքն երկնային,
Թե լույսը քե՛զ չտայի,
Իմ հայրենի՛ք, իմ երկի՛ր...

Մասի 'ս, հպա 'րտ ես դու,
Մինչ ես '
Քո վշտերից կռանու՛մ եմ.
Ջահել, գվա՛րթ ես դու,
Մինչ ես
Քո հոգսերից ծերանում եմ.
Դրանից չե՞ս դու վե՛հ ու վե՛հ,
Իսկ ես տանջվու՛մ,
Սրտնեղում եմ,
Որ մի օրվա անցորդ եմ ես
Իսկ դու հավետ քո տեղու՛մ ես...
Ես քարանում եմ քո վշտից,
Դու խաղ անում աստղերի հետ...
Երանի ես լեռ լինեի
Իսկ դու Մասի 'ս,-հայրց պոե 'տ: